Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ՄԱՍԻՆ

Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկի վիրուսից: Բոլոր նրանք, ովքեր սերտ, անձնական կապի մեջ են եղել կապիկի ծաղիկով հիվանդի հետ, վտանգի տակ են:

Ախտանիշները սովորաբար հայտնվում են վարակվելուց 5-21 օր հետո

ԴԻՄՆԱԿԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

ՑԱՆ

Ցանը կարող է՝

- Ունենալ ելունդների, բշտիկների, պզուկների, խոցերի կամ քոսի տեսք
- Գտնվել մարմնի ցանկացած մասում, այդ թվում՝ սեռական օրգանների վրա, հետանցքի, բերանի մեջ, ձեռքերի և դեմքի վրա
- Լինել ընդամենը մեկ հատվածում կամ տարածվել ամբողջ մարմնի վրա
- Քոր առաջացնել կամ ցավոտ լինել (հատկապես, եթե գտնվում է բերանի կամ հետանցքի մեջ)

ԱՅԼ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

ՀԱՐԲՈՒԽԻ ՆՄԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

Ջերմություն/դող

Հյուծվածություն, մկանային ցավեր և գլխացավեր

Այտուցված ավշային հանգույցներ

- Հարբուխի նման ախտանշանները կարող են հայտնվել ցանի առաջանալուց 1-4 օր առաջ կամ հետո
- Այս ախտանիշները ոչ բոլորի մոտ են հայտնվում

Կապիկի ծաղիկի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
ph.lacounty.gov/Monkeypox 9/9/2022 Armenian

County of Los Angeles Public Health

ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԸ

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է սերտ, մտերմիկ (ինտիմ) և/կամ երկարատև շփման միջոցով, այդ թվում՝

- Մաշկը մաշկին շփում ցանի, վերքի կեղևի կամ խոցերի հետ սեռական հարաբերության և այլ մտերմիկ շփումների ժամանակ, օրինակ՝ համբուրվելիս, մերսելիս և գրկախառնվելիս:
- Շփում առարկաների և գործվածքների հետ (օրինակ՝ հագուստի, անկողնային պարագաների, սրբիչների կամ սեքս-խաղալիքների), որոնք օգտագործել է կապիկի ծաղիկով հիվանդը, և դրանք չեն մաքրվել:
- Շփում շնչառական արտազատուկների հետ: Դա կարող է տեղի ունենալ երկարատև, սերտ, դեմ առ դեմ կամ ինտիմ շփման ժամանակ:

Կապիկի ծաղիկով հիվանդը կարող է այն տարածել ուրիշներին՝ սկսած ախտանշանների հայտնվելու պահից, մինչև երբ ցանը բուժվել է, կեղևակալած մաշկը թափվել է և առաջացել է մաշկի նոր շերտի: Դա սովորաբար տևում է 2-ից 4 շաբաթ:

Կապիկի ծաղիկով հիվանդ հղի անձը կարող է վարակել իր պտղին:

Կապիկի ծաղիկը ՉԻ տարածվում այն ունեցողի հետ պատահական զրույցների միջոցով կամ նրա կողքով քայլելիս:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ հասանելի է ավելի բարձր վտանգավորության խմբում գտնվող անձանց համար, ներառյալ այն անձանց, ովքեր շփվել են կապիկի ծաղիկի հետ:

ՀԱԿԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԲՈՒԺՈՒՄԸ հասանելի է այն անձանց համար, ովքեր ծանր հիվանդ են կապիկի ծաղիկով կամ գտնվում են դրա վտանգի տակ:

Լրացուցիչ տեղեկությունների համար խոսեք ձեր բժշկի հետ կամ այցելեք ph.lacounty.gov/Monkeypox:

Անմիջապես ԴԻՄԵՔ ԲԺԻՇԿԻ, եթե նոր, անբացատրելի, ցան կամ վերքեր ունեք: Դա հատկապես կարևոր է, եթե շփվել եք որևէ մեկի հետ, ով ունի կամ կասկած կա, որ ունի կապիկի ծաղիկ:

ԵԹԵ ԲԺԻՇԿ ՉՈՒՆԵՔ՝

- Զանգահարեք Հանրային Առողջության Վարչություն՝ 1-833-540-0473 (ամեն օր՝ առավոտյան 8:00-ից – երեկոյան 8:30-ը), կամ
- Այցելեք Հանրային Առողջության Վարչության սեռական առողջության կլինիկա ձեր մոտակայքում:

Սկանավորեք QR կոդը՝ գտնվելու վայրը գտնելու համար